ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԽՄԲԱՎԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻՍՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԷՔԻՃԵԱՆԻՆ* ՈՐ ՅԵՐԵՒԱՆ, Ի ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեզ սրտի խոր գոհունակութիւն պատճառեց այն լուրը, որ այս տարի, 1999-ին, կը լրանայ Ձեր ծննդեան 70-ամեակը: Վստահաբար Հայաստանի Հանրապետութեան և առհասարակ Հայ ժողովուրդի արուեստասէր հասարակութեան մօտ արժանաւորապէս կը նշուի Ձեր կեանքի այս հանգրուանը և լուսարձակի տակ կը բերուի բեղուն գործունէութեան վաստակը երաժշտական արուեստի բնագաւառին մէջ Ձեր մատուցած անգնահատելի ծառայութեանց:

Երկար տարիներէ ի վեր Ձեզ անձամբ ճանչնալով և մօտէն հետևած ըլլալով Ձեր յարատև և տքնաջան աշխատանքին՝ քաջատեղեակ ենք այն երկնատուր տաղանդներուն, որոնցմով Ձեզ օժտած է բարեաց և շնորհաց Աղբիւրը՝ Աստուած ինք: Դուք գիտցաք այդ տաղանդները կեանքով ու գործով, ամբողջանուէր ծառայութեամբ արժեցնել ալսքան տասնամեակներէ ի վեր՝ Հայաստանի և արտասահմանի մէջ պետական երգչախումբի և նուագախումբի Ձեր շնորհալից ղեկավարութեամբը: Դասական և հայկական երաժշտութեան բարձրագոյն ոլորտներու մեկնաբանը եղաք՝ հոգեկան վայելքի բացառիկ պահեր ընծայելով մեր ժողովուրդին և օտար արուեստասէր հասարակութեան:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմարժէք ծառայութեանց և արուեստի նուաճումներուն՝ այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

«Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» շքանշանը:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջ կեանք ընդ երկայն աւուրս, որպէսզի առաւել ճոխ նուաճումներով արժէցնէք Ձեր տաղանդները մանաւանդ մեր Հայրենիքի պետականօրէն վերանկախացեալ այս շրջանին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22 Յունուարի
Յամի Տեառն 1999 և ի Թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ Համարաւ Է/208